



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

«27» «փետրվար» 2023 թ. № 64-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի N 107-Լ
ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Հանրային ծառայության մասին» օրենքի 46.1-ին, 46.2-րդ, 46.3-րդ հոդվածներով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի մարտի 24-ի «Շրջակա միջավայրի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին» N 107-Լ հրամանի N 4-րդ հավելվածի 5-րդ կետը լրացնել 19.1-ին ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.
«19.1) իրականացնում է Նախարարության իրավասության շրջանակներում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների և Նախարարության կողմից հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքների համակարգումը»:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

2/27/2023

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«27» «փետրվար» 2023 թ.

ք. Երևան